

Նոր խմբագրությամբ հաստատված է

«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»
Սահմանափակ
Պատասխանատվությամբ
Բնակավայրի մասնակիցների
հավաքովի ընդունվում
«09» սեպտեմբերի 2023 թ.



«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»

ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔԸ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ (ԴԻԼԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ
(նոր խմբագրությամբ)

ք. ԵՐԵՎԱՆ
2023թ.

«ԱԼՖԱՍԵ-ԲՅՈՒՐԻԹԻՉ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բրոքերային (դիլերային) գործարքները կարգավորող կանոնները (այսուհետ՝ Կանոններ) մշակված են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ Օպերատոր) կանոններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Սույն Կանոնները սահմանում են՝

1. հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության կազմը և դրա ներկայացման ձևը.
2. հաճախորդներից պահանջվող տեղեկատվության կազմը և դրա ներկայացման ձևը.
3. պատվերի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները (այդ թվում՝ պատվերի տեսակները), պատվերի ներկայացման, ինչպես նաև դրանում փոփոխությունների կատարման կարգը, պատվերների ստացման և հաղորդման գրանցումները.
4. գործարքների կնքման և կատարման կարգը.
5. պատվերների կատարման քաղաքականությունը.
6. գործարքի վավերագրի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները և գործառնական բաժին դրա ներկայացման կարգը.
7. հաճախորդին պատվերի կատարման արդյունքների և հաճախորդի արժեթղթերի ու դրամական միջոցների մասին տեղեկությունների ներկայացման կարգը և ձևը
8. համապատասխան որակավորում ունեցող յուրաքանչյուր բրոքերի կողմից առանց համապատասխան ղեկավարի վավերացման պատվերի հիման վրա կնքվող գործարքի թույլատրելի առավելագույն սահմանաչափը.
9. բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացման (ձևավորման) սկզբունքները.
10. աճուրդներին Ընկերության մասնակցության կարգը.
11. երկրորդային շուկայում գործարքների կնքման ընթացակարգը.
12. ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների կնքման ընթացակարգը.
13. բրոքերային գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացող ռիսկերի կանխարգելմանն ու հաճախորդների միջոցների պաշտպանությանն ուղղված միջոցառումները:

Կանոն 1. Կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները

(ա) Սույն Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

«**Հաճախորդ**». անձ, որն օգտվում է Ընկերության ներդրումային ծառայություններից, կամ որը դիմել է Ընկերությանը՝ ներդրումային ծառայություններից օգտվելու նպատակով.

«**Բրոքերային գործունեություն**». Ընկերության կողմից հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման, ինչպես նաև իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման հետ կապված գործունեություն.

«**Դիլերային գործունեություն**». Ընկերության կողմից իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարման հետ կապված գործունեություն.

«**Բրոքեր (դիլեր)**». անձ, որն Ընկերության կազմում կամ անունից իրականացնում է բրոքերային (դիլերային) գործունեություն.

«**Հայտ**». բրոքերի (դիլերի) կողմից կարգավորվող կամ չկարգավորվող շուկաներում տրվող արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ.

«**Հայտերի հերթ**». բրոքերի (դիլերի) կողմից մուտքագրված և դեռևս չբավարարված հայտերի՝ որոշակի հատկանիշի (հատկանիշների) հիման վրա կանոնակարգված հաջորդականություն.

«**Բրոքերային ծառայությունների պայմանագիր**». բրոքերային ծառայություններից օգտվելու համար Ընկերությանը դիմած անձի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որում ներառվում են տվյալ անձի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքի կնքման և կատարման հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

«**Պատվեր**». արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարականը, ինչպես նաև Ընկերության կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը.

«**Բավարարել լրիվ**» **պատվեր**. հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում բացառապես դրանում նշված քանակով արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով.

«**Բավարարել մասնակի**» **պատվեր**. հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարումը մասնակիորեն՝ մնացորդը հայտերի հերթում ընդգրկելու պայմանով.

«Հանել մնացորդը» պատվեր. հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում դրանում նշված արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը հայտերի հերթում չընդգրկելու պայմանով.

«Անմիջապես բավարարել կամ հանել» պատվեր. հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում՝ պատվերում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում չի ընդգրկվում հայտերի հերթում.

«Պահել հերթում մինչև բավարարումը» պատվեր. հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է, որ պատվերի հիման վրա կազմված հայտը կարող է մնալ հայտերի հերթում՝ մինչև պատվերում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը.

«Շուկայական պատվեր». հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով անմիջապես արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով.

«Գնման/վաճառքի լիմիտային պատվեր». հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ դրանում ֆիքսված գնից ոչ բարձր (ոչ ցածր) գնով արժեթուղթ գնելու (վաճառելու) պայմանով.

«Գնման/վաճառքի ստոպ պատվեր». հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ դրանում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում.

«Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր». հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող հանձնարարական, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով.

«Արժեթղթերի բաժին». Ընկերության ստորաբաժանում, ստորաբաժանման բացակայության դեպքում՝ Ընկերության գործադիր տնօրենը կամ վերջինիս հրամանով սահմանված այլ աշխատակից, որն իրականացնում է գործարքների, հաճախորդների պատվերների, գործարքների վավերագրերի, ինչպես նաև հաճախորդների արժեթղթերի և/կամ դրամական միջոցների հաշվառում.

«Գործարքի վավերագիր». գործարքը կնքող բրոքերի (դիլերի) կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և գործառնական բաժին ներկայացվող փաստաթուղթ.

«Կարգավորվող շուկայում կնքված գործարք». ֆոնդային բորսայի կամ այլ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կամ այլ կարգավորվող շուկայում կնքված գործարք.

«Զկարգավորվող շուկայում կնքված գործարք». կարգավորվող շուկայից դուրս կատարված գործարք:

«Աճուրդ». Արժեթղթերի թողարկումների տեղաբաշխման կամ հետգնման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կամ այլ թողարկողի կողմից կազմակերպվող փակ կամ բաց մրցույթային գործընթաց, որի ժամանակ արժեթղթեր ձեռք բերելու կամ վաճառելու նպատակով պոտենցիալ գնորդները կամ վաճառողները ներկայացնում են համապատասխան հայտեր.

«Սպասարկման պայմանագիր». Ընկերության և իր գործընկերոջ միջև կնքված պայմանագիր, որի համաձայն գործընկերը մատուցում է արժեթղթերի շուկայում գործառնությունների և/կամ պահառուական ծառայություններ.

«Ռեպո/հակադարձ ռեպո գործարք». այն գործարքը, որով վաճառողը գնորդին է օտարում արժեթուղթը՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ գնորդը սեփականության իրավունքով ձեռք է բերում արժեթուղթը՝ գործարքի մարման օրը դրանք վերավաճառելու պարտավորությամբ.

«Հաղորդագրություն». գործընկերոջ կողմից աճուրդի արդյունքների վերաբերյալ պաշտոնական տեղեկացումը.

«Դեպո հաշիվ». արժեթղթերի հաշվառման համար նախատեսված պահառուի/ենթապահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:

«Գործադիր տնօրեն». Ընկերության գործադիր տնօրեն կամ վերջինիս լիազորություններն իրականացնող անձ:

«Գլխավոր հաշվապահ». Ընկերության Գլխավոր հաշվապահ կամ վերջինիս լիազորություններն իրականացնող անձ:

«Լեվերիջ» գործարք կնքելու համար նախապես ներդրված ապահովվածության գումարի (մարժայի) և գործարքի ամբողջ գումարի հարաբերություն, որը փոքր է մեկից:

«Ֆորեքս գործարք», Արժեթղթերի շուկայի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք (գործարք), որի գինն

ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է արտարժույթի փոխարժեքից և որը կնքվում է լեվերիջով:

«**Լեվերիջով գործարք**». ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործարք, որը կնքվում է լեվերիջով, այդ թվում՝ ֆորեքս գործարք:

«**Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին**». որևէ անձին ուղղված անհատական բնույթի խորհրդատվություն, առաջարկություն կամ նմանատիպ բնույթի այլ գործողություն կամ ծառայություն (այսուհետ՝ խորհրդատվություն) կապված արժեթղթերով կամ ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքների կնքման հետ, մասնավորապես՝

ա. խորհրդատվության տրամադրումը որևէ արժեթղթի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ նմանատիպ բնույթի գործարքի վերաբերյալ, կամ

բ. խորհրդատվության տրամադրումը կոնկրետ արժեթղթից կամ ածանցյալ ֆինանսական գործիքներից բխող որևէ իրավունքի իրականացման կամ չիրականացման վերաբերյալ, որը կապված է արժեթղթի գնման, վաճառքի, բաժանորդագրման, մարման, պահելու, երաշխավորելու կամ նմանատիպ բնույթի գործարքի հետ, կամ

գ. կրթումը, վերապատրաստումը, ուսուցումը, դասընթացը և վերլուծությունների ու այլ տեղեկությունների տրամադրումը լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների վերաբերյալ (բացառությամբ, եթե տվյալ գործողություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գործող հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից), ինչպես նաև տվյալ գործարքների կնքման նպատակով ստեղծված օնլայն առևտրային հարթակների (էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի, տերմինալների և այլ ծրագրերի) վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

«**Պրոֆեսիոնալ հաճախորդ**». հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար:

«**Կանոնակարգ 4/05**». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված ,Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի դեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը կանոնակարգ 4/05:

«**Կանոնակարգ 4/06**». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշմամբ հաստատված ,Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը կանոնակարգ 4/06:

«**Կանոնակարգ 4/07**». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված ,Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները կանոնակարգ 4/07:

«**Գործընկեր**». Ներդրումային ծառայություններ մատուցող անձի հետ համագործակցող կազմակերպություն, որի կողմից տրամադրված օնլայն առևտրային հարթակների (էլեկտրոնային հաղորդակցման համակարգերի, տերմինալների և այլ ծրագրերի) միջոցով կամ որի հետ կնքվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձի հաճախորդների լեվերիջով գործարքները, այդ թվում՝ ֆորեքս գործարքները:

(բ) Սույն Կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով սահմանված նշանակությունները:

Կանոն 2. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ա) Նախքան պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումը Ընկերությունն իր հաճախորդներին է տրամադրում հետևյալ տեղեկատվությունը՝

- (1) Ընկերության և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին,
- (2) արժեթղթերի տեսակների և ռիսկերի մասին,
- (3) գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա).
- (4) բրոքերային ծառայությունների մատուցմամբ պայմանավորված ծախսերի և միջնորդավճարների մասին:

(բ) Սույն Կանոնի (ա) կետով սահմանված տեղեկությունները հաճախորդին են ներկայացվում բանավոր կամ ստանդարտ ձևով (գրքույկի տեսքով):

- (գ) Նախքան բրոքերային ծառայությունների պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումը Ընկերությունը, հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից Կանոնակարգեր 4/06 և 4/07-ով սահմանված չափանիշները, դասակարգում է հաճախորդներին որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակի (դասի) գործարքների մասով: Ներդրողները կարող են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ իրենց համաձայնությունը տալու դեպքում: Համաձայնությունը տրվում է բանավոր, իսկ հաճախորդի ցանկության դեպքում՝ նաև գրավոր ձևով:
- (դ) Այն հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով տվել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակվելու համար, գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանը այն մասին, որ.
 - (1) համաձայն են որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ,
 - (2) տեղյակ են, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:
- (ե) Ընկերությունը կարող է իր՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգված հաճախորդին չտրամադրել սույն Կանոնի (ա) կետի (1), (2) և (4) ենթակետերով սահմանված տեղեկատվությունը:
- (զ) Հաճախորդին՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգելու դեպքում Ընկերությունը պարտավոր է համապատասխան գրառում կատարել հաճախորդի հետ կնքվող բրոքերային ծառայությունների պայմանագրում:
- (է) Ընկերության կամ վերջինիս պրոֆեսիոնալ հաճախորդի նախաձեռնությամբ Ընկերությունը կարող է պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և իրականացնել դրանից բխող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
- (ը) Եթե Ընկերությունը տեղեկանում է, որ հաճախորդը դադարել է որակավորված ներդրող լինելուց, ապա նա պետք է անհապաղ ձեռնարկի միջոցներ այդ հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակը դադարեցնելու ուղղությամբ՝ վերջինիս հետ կնքվող բրոքերային ծառայությունների պայմանագրի լրացում առանց սույն Կանոնի (գ) կետով սահմանված գրառման:

Կանոն 3. Հաճախորդից պահանջվող տեղեկատվության կազմը և դրա ներկայացման ձևը

- (ա) Ընկերությունը պարտավոր է մինչև պատվերի ընդունումը հաճախորդից պահանջել տեղեկատվություն մատուցվող բրոքերային ծառայությունների կամ արժեթղթերի վերաբերյալ հաճախորդի գիտելիքների և փորձի մասին: Մասնավորապես՝
 - (1) տեղեկություններ այն բրոքերային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է հաճախորդը.
 - (2) հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը, ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները.
 - (3) հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունը և զբաղմունքը:
- (բ) Սույն Կանոնի (ա) կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Ձև 1-ին համապատասխան:
- (գ) Ընկերությունը կարող է համարել, որ իր պրոֆեսիոնալ հաճախորդներն ունեն սույն Կանոնի (ա) կետով անհրաժեշտ գիտելիքներն ու փորձը, և չպահանջել Ձև 1-ով սահմանված տեղեկատվությունը:
- (դ) Այն դեպքում, եթե Ընկերությունը հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող բրոքերային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում հաճախորդի պահանջներին, ապա Ընկերությունը բանավոր կերպով զգուշացնում է հաճախորդին այդ մասին:
- (ե) Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում սույն Կանոնի (ա) կետով նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը պարտավոր է բանավոր կերպով զգուշացնել հաճախորդին այն մասին, որ հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում են հաճախորդի պահանջներին:

- (զ) Հաճախորդը պարտավոր է Ձև 1-ով ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում, որոնք հանգեցնում են հաճախորդի պահանջների փոփոխությանը, տեղեկացնել Ընկերությանը՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Ձև 1-ով սահմանված համապատասխան տեղեկությունները ներկայացնելու միջոցով:
- (է) Ընկերությունը հաճախորդի պահանջների փոփոխությունների մասին տեղեկացված է համարվում, եթե փոփոխված տեղեկություններ պարունակող Ձև 1-ն ուղարկվել է փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն:

Կանոն 4. Պատվերի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները, պատվերի ներկայացման և դրանում փոփոխությունների կատարման կարգը

- (ա) Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերը պետք է գրանցվի այն ստանալու օրը և ներառի հետևյալ տեղեկությունները՝
 - (1) պատվերի համարը՝ ըստ պատվերների գրանցամատյանի.
 - (2) պատվերի տրման ժամանակը (տարի/ամիս/օր/ժամ/րոպե).
 - (3) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), ստորագրությունը կամ հաճախորդին նույնականացնող համարը /սահմանվում է հերթականության սկզբունքով/.հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, օպցիոնի իրականացման պատվեր և այլն).
 - (4) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը).
 - (5) գործարքի տիպը (կարգավորվող շուկայում/չկարգավորվող շուկայում).
 - (6) գործարքի տեսակը (առք, վաճառք).
 - (7) պատվերի տեսակը.
 - (8) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ (առկայության դեպքում).
 - (9) պատվեր գրանցող աշխատակցի անունը, ազգանունը, ստորագրությունը.
 - (10) արժեթղթերի քանակը, միավորի գինը և ընդհանուր ծավալը.
 - (11) պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ՝ սահմանված Ընկերության և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:
- (բ) Սույն Կանոնի (ա) կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Ձև 2-ին համապատասխան.
- (գ) Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերը պետք է ներառի՝
 - (1) պատվերի հետևյալ տեսակները՝ ըստ գնային պայմանների՝
 - (Ա) Շուկայական պատվեր
 - (Բ) Գնման/վաճառքի լիմիտային պատվեր
 - (Գ) Գնման/վաճառքի ստոպ պատվեր
 - (Դ) Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր:
 - (2) պատվերի հետևյալ տեսակները՝ ըստ ծավալային պայմանների՝
 - (Ա) Բավարարել լրիվ
 - (Բ) Բավարարել մասնակի
 - (Գ) Հանել մնացորդը:
 - (3) պատվերի հետևյալ տեսակները՝ ըստ ժամանակային պայմանների՝
 - (Ա) Անմիջապես բավարարել կամ հանել
 - (Բ) Պահել հերթում մինչև բավարարումը:
- (դ) Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն հաճախորդի կողմից Ձև 2-ին համապատասխան լրացված և արժեթղթերի բաժին ներկայացված պատվերը: Վերջինս ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն (պատվերների ներկայացում գրավոր ձևով):
- (ե) Հաճախորդի կողմից պատվերը տրվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է արժեթղթերի բաժնում, իսկ մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և արժեթղթերի բաժնի պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին:
- (զ) Այն դեպքում, երբ հաճախորդի կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը չի համապատասխանում վերջինիս պահանջներին, ինչպես նաև արժեթղթերի շուկայում նրա գիտելիքներին ու փորձին, Ընկերությունը պարտավոր է անմիջապես մինչև պատվերի կատարումը տեղեկացնել այդ մասին հաճախորդին, իսկ վերջինս էլ

պարտավոր է հետ կանչել իր պատվերը՝ հետ կանչման որոշում ընդունելու մասին գրավոր ծանուցելով Ընկերությանը, դրանում կատարել համապատասխան փոփոխություններ կամ փոփոխել Կանոն 3-ի (ա) կետի համաձայն ներկայացված տեղեկությունները:

- (է) Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացրած պատվերը կամ դրանում ծավալային կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ պատվերով դեռևս գործարք չի կնքվել Ընկերության կողմից:
- (ը) Պատվերում ներառվող տեղեկությունների փոփոխության դեպքում հաճախորդը պարտավոր է մինչև Ընկերության կողմից տվյալ պատվերով գործարքի կնքումը նոր, փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը ներկայացնել արժեթղթերի բաժին: Նոր տրվող պատվերում պարտադիր պետք է կատարվի նշում փոփոխման ենթակա պատվերի համարի և տրման ամսաթվի մասին: Փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը Ընկերությանը ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն (պատվերների ներկայացում գրավոր ձևով):
- (թ) Հաճախորդի կողմից փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը տրվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Ընկերությունում, իսկ մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և արժեթղթերի բաժնի պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին:
- (ժ) Ընկերության համապատասխան որակավորում ունեցող յուրաքանչյուր բրոքերի կողմից առանց համապատասխան ղեկավարի (տնօրենի) վավերացման, պատվերի հիման վրա կնքվող գործարքի թույլատրելի առավելագույն սահմանաչափը կազմում է 500 (երկու հարյուր) միլիոն ՀՀ դրամ:
- (ի) Սույն Կանոնի (ժ) կետով նախատեսված սահմանաչափը գերազանցելու դեպքում՝ համապատասխան ղեկավարը (գործադիր տնօրենը) պարտավոր է ստորագրել Ընկերության արժեթղթերի բաժնում մնացող պատվերի օրինակը՝ վերջինիս վրա կատարելով «Պատվերը վավերացված է» նշագրումը:

Կանոն 5. Պատվերների ստացման և հաղորդման գրանցումներ

- (ա) Ընկերությունը պարտավոր է վարել հաճախորդների կողմից տրված պատվերների գրանցամատյան, որում գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:
- (բ) Պատվերների գրանցամատյանն Ընկերության կողմից վարվում է էլեկտրոնային ձևով:
- (գ) Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասին գրանցումներն առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները.
 - 1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը /սահմանվում է հերթականության սկզբունքով/
 - 2) հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
 - 3) հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, օպցիոնի իրականացման պատվեր և այլն),
 - 4) հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
 - 5) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
 - 6) արժեթղթերի քանակը,
 - 7) միավորի գինը,
 - 8) ընդհանուր ծավալը,
 - 9) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
 - 10) հաճախորդի կողմից տրված պատվերի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն.
 - 11) պատվերը գրանցող աշխատակցի անունը, ազգանունը:
- (դ) Եթե Ընկերությունը հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման պատվերներ է ընդունում և հաղորդում, ապա պատվերի հաղորդումից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը Ընկերությունը պետք է կատարի գրանցումներ ընդունված և հաղորդված պատվերների մասին: Այդ գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.
 - (1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը)

- (2) այն անձի անվանումը, ում հաղորդվել է պատվերը
- (3) հաղորդված պատվերի պայմանները՝ համաձայն սույն Կանոնի (գ) կետի 2-ից 9-րդ ենթակետերում նշված տեղեկատվության
- (4) պատվերի հաղորդման ամսաթիվը և ճշգրիտ ժամը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:

Կանոն 6. Գործարքների կնքման և կատարման կարգը

- (ա) Հաճախորդը մինչև պատվերի ներկայացումը պարտավոր է Ընկերությանը տրամադրել նաև՝
 - (1) իրավաբանական անձի անունից պատվեր ներկայացնելու իրավասություն ունեցող անձի լիազորությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագրի անհրաժեշտության դեպքում) և պատվեր ներկայացնող անձի անձնագրի պատճենը: Ֆիզիկական անձանց համար՝ միայն անձնագրի պատճենը:
 - (2) արժեթղթերի վաճառքի պատվեր ներկայացնելու դեպքում՝ վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ:
- (բ) Արժեթղթերի բաժնի պատասխանատու աշխատակիցը պատվերի ընդունումից հետո պատվերի մեջ ներառված՝ գործարքի կնքման համար բոլոր անհրաժեշտ տվյալների հիման վրա կազմում է բրոքերային (դիլերային) հայտերը: Ընկերության հաճախորդների կողմից ներկայացված պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության դիլերային հայտերի նկատմամբ:
- (գ) Ընկերության կողմից գործարքները կնքվում են՝
 - (1) կարգավորվող շուկայում՝ բրոքերի (դիլերի) կողմից արժեթղթերի գնման/վաճառքի հայտ ներկայացնելու միջոցով:
 - (2) չկարգավորվող շուկայում՝ բրոքերի (դիլերի) կողմից կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:
- (դ) Կարգավորվող շուկայում բրոքերի (դիլերի) կողմից գործարքները կնքվում և կատարվում են կարգավորվող շուկայի կողմից սահմանված Կանոններին համապատասխան:
- (ե) Չկարգավորվող շուկայում գործարքներն Ընկերության կողմից կատարվում են արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն: Չկարգավորվող շուկայում գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Ընկերության և հաճախորդի միջև կնքված չկարգավորվող շուկայում գործարքի կնքման պայմանագրով:

Կանոն 7. Պատվերների կատարման քաղաքականությունը

- (ա) Ընկերությունը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որ կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի բնույթը և այլ գործոններ: Պատվերը ձևակերպելուց առաջ հաճախորդին պատշաճ ձևով ներկայացվում է պատվերի առարկա հանդիսացող արժեթղթերի և նրանցում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկերը, որից հետո հաճախորդը տալիս է իր համաձայնությունը կրել իր պատվերի առարկա հանդիսացող արժեթղթերի և նրանցում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկերը համաձայն Ձև 5-ի և Ձև 7-ի :
- (բ) Պատվերների հիման վրա գործարքներ կնքելիս Ընկերությունը հաշվի է առնում՝
 - (1) հաճախորդի դասակարգումը որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ
 - (2) պատվերի էական պայմանները (գնային, ծավալային և քանակական պայմանները, հաճախորդի առանձնահատուկ ցուցումները և այլն)
 - (3) պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն)
 - (4) գործարքի կնքման վայրի առանձնահատկությունները:
- (գ) Ընկերությունը կատարում է հաճախորդների կողմից ներկայացված պատվերներն ըստ դրանց ներկայացման հերթականության, բացառությամբ, եթե տվյալ հաճախորդի կողմից ներկայացվել են գործարքի կատարման առանձնահատուկ ցուցումներ կամ եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում:

- (դ) Ընկերությունը կատարում է հաճախորդի կողմից ներկայացված պատվերը համաձայն առանձնահատուկ ցուցումների, եթե այդպիսիք ներկայացվել են վերջինիս կողմից, անգամ եթե պատվերի կատարման հետևանքով Ընկերության կողմից չի ապահովվի պատվերի կատարման լավագույն արդյունք:
- (ե) Գործարքի կնքման լավագույն տարբերակն ընտրելիս Ընկերությունը դիտարկում է՝
- (1) գործարքի կատարման արագությունը և հավանականությունը. ելնելով գնի և ծավալների տատանողականության մակարդակներից՝ Ընկերությունն ընտրում է հաճախորդների պատվերների կատարման հնարավոր ամենաարագ տարբերակը:
 - (2) լավագույն գնի և հնարավոր նվազագույն ծախսերի ընտրություն. հաճախորդների կողմից ներկայացված պատվերները կատարվում են հաշվի առնելով տվյալ պատվերների առարկա հանդիսացող արժեթղթի՝ Ընկերության գործընկեր հանդիսացող ընկերությունների կողմից առաջարկվող նվազագույն գին և հնարավոր նվազագույն միջնորդավճար պարունակող առաջարկը:
 - (3) պատվերի կատարման որակը. Ընկերության համապատասխան աշխատակիցները տարբեր շուկաներում կատարում են ամենօրյա ուսումնասիրություններ և պատվերը կատարելիս ընտրում են պատվերի անկողմնակալ, ճշգրիտ, հուսալի և անհապաղ (կախված պատվերի էական պայմաններից) կատարման ճանապարհը:
 - (4) հաճախորդի հատուկ ցուցումներ. Ընկերությունը պարտավոր է կատարել հաճախորդի կողմից ներկայացված պատվերներն առնվազն դրանց մեջ նշված պայմաններով: Հետևաբար, եթե հաճախորդը ներկայացնում է պատվերի կատարման հատուկ ցուցումներ, որոնք շեղվում են սույն Կանոնի (ե) կետի (1) - (3) ենթակետերի դրույթներից, հաճախորդը պարտավոր է հստակ նշել գործարքի կատարման իր կողմից նախընտրելի տարբերակը: Համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով պատվերը կատարելու համար, եթե կատարել է պատվերը կամ պատվերի որևէ առանձնահատուկ պայման՝ հետևելով հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներին:
 - (5) գործարքի կնքման վայրի ընտրություն. Ընկերությունը պետք է ընտրի գործարքների կնքման այն վայրը, որի միջոցով պատվերի կատարման դեպքում հաճախորդի համախառն ծախսերը (արժեթղթի գինը և գործարքի կնքման հետ կապված այլ ծախսերը) կլինեն նվազագույնը:
- (զ) Բրոքերային գործունեության շրջանակներում արժեթղթերով գործարքներ կատարելիս Ընկերությունը պետք է՝
- (1) համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
 - (2) հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:
- (է) Ընկերության կողմից ստացվող պատվերի լավագույնս կատարման պարտավորությունը ներառում է ոչ միայն գնային, այլ նաև այլ գործոններ, մասնավորապես՝ հնարավոր ծախսերը, գործարքի արագությունը և հավանականությունը: Նշված հանգամանքներից ելնելով՝ անգամ եթե գործարքը կատարվում է ոչ լավագույն գնով, դա ամենևին էլ չի նշանակում պատվերի հնարավոր լավագույն պայմաններով կատարման պարտավորության խախտում:
- (ը) Ընկերությունը պետք է հաճախորդներին տեղյակ պահի պատվերների կատարման քաղաքականության մասին և ստանա հաճախորդի նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:
- (թ) Ընկերությունը պարտավոր է վերանայել պատվերների կատարման քաղաքականությունը այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ քաղաքականության համաձայն ընտրված՝ գործարքների կնքման վայրի միջոցով կատարել հաճախորդի պատվերները հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:

Կանոն 8. Գործարքի վավերագրի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները և արժեթղթերի բաժին դրա ներկայացման կարգը

- (ա) Գործարք կնքելուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, բրոքերի (դիլերի) կողմից լրացվում է գործարքի վավերագիրը, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝
- (1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը)
 - (2) վավերագրի հերթական (անհատական) համարը
 - (3) վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)
 - (4) համապատասխան պատվերի համարը
 - (5) գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը և օրը
 - (6) գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն
 - (7) գործարքի տեսակը (առք, վաճառք)
 - (8) գործարքի բնույթը, եթե գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն)
 - (9) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեթղթի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը)
 - (10) արժեթղթերի քանակը,
 - (11) միավորի գինը
 - (12) ընդհանուր ծավալը
 - (13) գործարքի մյուս կողմը
 - (14) գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «կարգավորվող շուկա»),
 - (15) գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.
 - (16) գործարքը կնքող բրոքերի (դիլերի) անունը, ազգանունը և ստորագրությունը:
- (բ) Մույն Կանոնի (ա) կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Ձև 2-ին համապատասխան:
- (գ) Բրոքերի (դիլերի) կողմից լրացված գործարքի վավերագիրը մինչև գործարքի կնքման օրվա ավարտը ներկայացվում է արժեթղթերի բաժին:
- (դ) Գործարքների վավերագրերը պետք է կարվեն առանձին թղթապանակում, ինչպես նաև գրանցվեն Ընկերության կողմից էլեկտրոնային ձևով վարվող վավերագրերի գրանցամատյանում:

Կանոն 9. Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացման (ձևավորման) սկզբունքները

- (ա) Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց Ընկերությունը հաճախորդներից գանձում է միջնորդավճարներ, որոնց չափը սահմանվում է Ընկերության տնօրենի կողմից՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից.
- (1) միջնորդավճարները պետք է լինեն ճկուն և մրցունակ՝ հաշվի առնելով համեմատելի հանգամանքներում նույնանման ծառայությունների համար գանձվող վճարների մեծությունը.
 - (2) միջնորդավճարները պետք է փոխհատուցեն ծառայությունների մատուցման համար Ընկերության կողմից կատարված ծախսերը՝ միաժամանակ ապահովելով ողջամիտ շահույթ:

Կանոն 10. Հաճախորդին պատվերի կատարման արդյունքների և հաճախորդի արժեթղթերի մասին տեղեկությունների ներկայացման կարգը և ձևը

- (ա) Պատվերի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Ընկերությունը պարտավոր է հաճախորդին առձեռն ներկայացնել (փոստով ուղարկել) գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն (ընթացիկ հաշվետվություն):
- (բ) Ընթացիկ հաշվետվությունը պետք է ներառի՝
- 1) Ընկերության անվանումը,
 - 2) հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը, գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր),
 - 3) գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,

- 4) հանախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
 - 5) գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «կարգավորվող շուկա»),
 - 6) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
 - 7) պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
 - 8) պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
 - 9) արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
 - 10) միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),
 - 11) ընդհանուր ծավալը,
 - 12) գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հանախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը,
 - 13) հանախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հանախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
 - 14) տեղեկատվություն այն փաստի մասին, որ հանախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ գտնվող որևէ այլ անձ կամ Ընկերության մեկ այլ հանախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:
- (գ) Սույն Կանոնի (բ) կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Ձև 6-ին համապատասխան:
- (դ) Եթե հանախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը հանախորդին ընթացիկ հաշվետվություն է ներկայացնում ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:
- (ե) Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը իր հանախորդին առձեռն տրամադրել (փոստով ուղարկել) վերջինիս պատվերների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով հաշիվների շարժի վերաբերյալ հաշվետվություններ (պարբերական հաշվետվություններ):
- (զ) Հանախորդի պատվերների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի՝
- (1) գործարքի տեսակը (առք, վաճառք).
 - (2) թողարկողի անվանումը.
 - (3) արժեթղթերի դասը.
 - (4) գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.
 - (5) գործարքի կնքման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
 - (6) գանձվող միջնորդավճարի մեծությունը.
 - (7) գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.
 - (8) Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- (է) Սույն Կանոնի (գ) կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Ձև 6-ին համապատասխան:
- (ը) Հանախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի՝
- (1) հանախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը.
 - (2) ամսաթիվը (օր/ամիս/տարի).
 - (3) գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում.
 - (4) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը.
 - (5) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը.
 - (6) հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը.
 - (7) Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- (թ) Սույն Կանոնի (ը) կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Ձև 6-ին համապատասխան:
- (ժ) Սույն Կանոնի համաձայն հանախորդին ներկայացվող հաշվետվությունները պետք է ներառեն հետևյալ տեղեկությունները՝

- (1) հաշվետվության ներկայացման ամսաթիվը.
 - (2) Ընկերության անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը.
 - (3) Ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
 - (4) պետք է վավերացված լինեն Ընկերության կնիքով:
- (ի) Մույն Կանոնի (ա) և (ե) կետերով սահմանված հաշվետվությունները հաճախորդին են տրամադրվում երկու օրինակից: Վերջինս պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ստացել է դրանք: Ստորագրված օրինակը վերադարձվում է Ընկերությանը և կարվում «Հաճախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում:

Կանոն 11. Աճուրդներին Ընկերության մասնակցության կարգը

- (ա) Արժեթղթերի թողարկման կամ հետգնման աճուրդներին մասնակցելու որոշում կայացնելու դեպքում գործադիր տնօրենը համապատասխան գործընկերոջը ներկայացնում է աճուրդին մասնակցելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ (այսուհետ՝ Հայտ): Հայտի ձևը և ներկայացման կարգը սահմանվում է Ընկերության և գործընկերոջ միջև կնքված սպասարկման պայմանագրով: Հայտի ներկայացման հետ մեկտեղ գործադիր տնօրենն սպահովում է հայտով սահմանված միջոցները/արժեթղթերը՝ սպասարկման պայմանագրով նախատեսված բանկային կամ դեպո հաշվին:
- (բ) Աճուրդի անցկացման օրը գործադիր տնօրենը, ստանալով գործընկերոջից հաղորդագրություն, որը վկայում է Ընկերության կողմից աճուրդին արժեթղթերի ձեռքբերման մասին, ստուգում է հաղորդագրությունում առկա տվյալների համապատասխանությունը Հայտի տվյալների հետ և համապատասխանության դեպքում Հայտը և հաղորդագրությունը գրանցում է Ընկերության պայմանագրերի գրանցամատյանում, որից հետո ներկայացնում է գլխավոր հաշվապահին՝ գործարքը հաշվապահական հաշվառման համակարգում ձևակերպելու նպատակով:
- (գ) Հաղորդագրության և Հայտի տվյալների միջև անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում գործադիր տնօրենը համապատասխան աշխատանքներ է իրականացնում գործընկերոջ հետ անհամապատասխանությունը վերացնելու ուղղությամբ:
- (դ) Գլխավոր հաշվապահը, ոչ ուշ, քան աճուրդի անցկացման հինգերորդ աշխատանքային օրվա ավարտը պարտավոր է ստանալ քաղվածք բանկային և/կամ դեպո հաշվից կատարված գործարքի վերաբերյալ և համեմատել քաղվածքում արտացոլված տվյալները Հայտի և հաղորդագրության տվյալների հետ: Տվյալների համապատասխանության մասին գլխավոր հաշվապահը տեղեկացնում է գործադիր տնօրենին բանավոր: Անհամապատասխանության դեպքում գործադիր տնօրենն իրականացնում է համապատասխան գործողություններ՝ անհամապատասխանությունները պարզելու և ուղղելու նպատակով:

Կանոն 12. Գործարքներ երկրորդային շուկայում

- (ա) Երկրորդային շուկայում արժեթղթերով գործարքներն իրականացվում են արժեթղթերի առքի կամ վաճառքի միջոցով:
- (բ) Առքի (վաճառքի) պայմանագրի կնքմամբ գործարքներն իրականացվում են պայմանագրում նշված արժեթղթերի առքի (վաճառքի) նախապես համաձայնեցված էական պայմանների համաձայն:
- (գ) Գործընկերոջ հետ արժեթղթերի առքուվաճառքի էական պայմանները համաձայնեցնելուց հետո գործադիր տնօրենը կազմում է համապատասխան պայմանագիր, ստորագրում և կնքում է այն, որից հետո ներկայացնում է գործընկերոջը՝ պայմանագիրը կնքելու նպատակով: Այն դեպքում, երբ պայմանագիրը կազմում է գործընկերը, գործադիր տնօրենը պարտավոր է ստուգել գործարքի էական պայմանները:
- (դ) Գործընկերոջ կողմից պայմանագիրը ստորագրելուց հետո գործադիր տնօրենը գրանցում է պայմանագիրը պայմանագրերի գրանցամատյանում, կազմում է համապատասխան փոխանցման հանձնարարական, որի կատարումը կապահովի պայմանագրով նախատեսված Ընկերության պարտավորությունների կատարումը, և ներկայացնում դրանք համապատասխան բանկ և/կամ պահառուին(ենթապահառուին)՝ ի կատարումն:
- (ե) Այն դեպքում, երբ առքուվաճառքի պայմանագիրը փոխանցվում է հեռահաղորդակցման կապի միջոցներով (Ֆաքսիմիլային, Բանկ-Հաճախորդ կամ այլ), ապա գործադիր տնօրենը պարտավոր է ապահովել երկկողմանի ստորագրված և կնքված պայմանագրերի բնօրինակների փոխանակումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

- (գ) Գործարքի պայմանագիրը և փոխանցման հանձնարարականները գործարքի կնքման օրը գործադիր տնօրենը ներկայացնում է գլխավոր հաշվապահին՝ գործարքը հաշվապահական հաշվառման համակարգում ձևակերպելու նպատակով:
- (ե) Գլխավոր հաշվապահը, ոչ ուշ, քան գործարքի կատարման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվա ավարտը, պարտավոր է ստանալ քաղվածք բանկային և/կամ դեպո հաշիվներից կատարված գործարքի վերաբերյալ և համեմատել քաղվածքում արտացոլված տվյալները պայմանագրի էական պայմանների հետ: Տվյալների համապատասխանության մասին գլխավոր հաշվապահը տեղեկացնում է գործադիր տնօրենին բանավոր: Անհամապատասխանության դեպքում գործադիր տնօրենն իրականացնում է համապատասխան գործողություններ՝ անհամապատասխանությունները պարզելու և ուղղելու նպատակով:

Կանոն 13. Ռեպո և հակադարձ ռեպո գործառնություններ

- (ա) Ընկերությունն իրականացնում է ռեպո և հակադարձ ռեպո գործառնություններ ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ռեզիդենտ առևտրային բանկերի և իր այլ գործընկերների հետ:
- (բ) Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքումը և հաշվարկների իրականացումը կատարվում է Կանոն 12-ի (գ) – (ե) կետերի համապատասխան:
- (գ) Ընկերությունը ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման չափորոշիչ են համարվում.
 1. Տվյալ օրվան նախորդող օրվա դրությամբ բանկերի կողմից ընկերությանը տրամադրված ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման նվազագույն տարբերակը:
 2. Տվյալ օրվան նախորդող օրվա դրությամբ բանկերի կողմից ընկերությանը տրամադրված ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման տարբերակներից միջինը:
 3. Տվյալ օրվան նախորդող օրվա դրությամբ բանկերի կողմից ընկերությանը տրամադրված ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման տարբերակներից վատագույնը:

Ընկերությունն Ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի ռեպո համաձայնագրերի գնահատումն իրականացնում է հետևյալ բանաձևով.

$$\text{Ռեպո գին} = \text{ԲՌՊԳ} + \text{ՊՊԵԿ} + \text{Ն}$$

Որտեղ՝

- ԲՌՊԳ-ն բանկերի կողմից ընկերությանը տրամադրված ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատված գինն է,
- ՊՊԵԿ-ն պետական պարտատոմսերի եկամտաբերության կորն է,
- Ն = (1;2;3...)

Ընկերությունը ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման վերջնական որոշումը կայացվում է բանակցությունների արդյունքում, պայմանագրային հիմունքներով, ինչը պայմանավորված է գործընկերոջ գործարար համբավով, ֆինանսական շուկայում տիրող իրավիճակով ու սպասումներով, ինչպես նաև ապահովելով Ընկերության Ն1 հիմնական տնտեսական նորմատիվը:

- (դ) Ընկերությունն ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքի որոշման համար հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները.
 - 1) Ընկերության հաճախորդի հետ ունեցած գործարքների քանակը,
 - 2) Հաճախորդների դասակարգումը,
 - 3) Հաճախորդի և Ընկերության միջև համագործակցության վաղեմությունը,
 - 4) Հաճախորդի գործարար համբավը, հեղինակությունը,
 - 5) Հաճախորդի հետ համագործակցության ռիսկայնությանը աստիճանը:

Ելնելով վերոնշյալից Ընկերությունն հաճախորդի հետ կնքվող ռեպո համաձայնագրի տոկոսադրույքը որոշվում է.

- 1) Համաձայնագրի կնքման օրվան նախորդող օրվա դրությամբ Ընկերության բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքներից առավելագույնին գումարելով 0,25 տոկոս:
- 2) Նոր հաճախորդի դեպքում կիրառվում է համաձայնագրի կնքման օրվան նախորդող օրվա դրությամբ Ընկերության բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքներից առավելագույնին գումարելով 1 տոկոս:
- 3) Բարձր ռիսկայնության դեպքում ընդունվում է գործող տոկոսադրույքներից ամենաբարձրը:

$$\text{Ռեպո \%} = \text{ԲՏՌ-ՊՏ} + \text{Ն\%}$$

Որտեղ՝

ԲՏՌ-ՊՏ - ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի բանկերի կողմից Ընկերությանը տրամադրված ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն է
 Ն%(0;1;2...)

Ընկերության և հաճախորդի միջև ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման և տոկոսադրույքի որոշվում է պայմանագրային հիմունքներով:

Ընկերությունը կարող է շեղվել վերոնշյալ սահմանված չափորոշիչներից՝ կախված շուկայական պայմաններից: Գործարքի այլ պայմանները որոշվում են բանակցությունների արդյունքում՝ ապահովելով Ընկերության Ն1 հիմնական տնտեսական նորմատիվը:

Կանոն 14. Բրոքերային գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացող ռիսկերը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները

(ա) Ընկերությունը պարտավոր է տեղեկացնել հաճախորդին այն մասին, որ արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

- (1) **Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ.** արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Ընկերության հսկողության տակ: Նշված պատճառով արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը:
- (2) **Իրագվելիության նվազման ռիսկ.** այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրագվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:
- (3) **Օրենսդրության փոփոխության ռիսկ.** այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով հաճախորդը կարող է կրել զգալի կորուստներ:
- (4) **Ենթակառուցվածքային ռիսկ.** այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկարքի ինդեքսային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են հանգեցնել հաճախորդի ակտիվների անվերադառնալի կորուստների:
- (5) **Այլ ռիսկեր.** վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ, քանի որ ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

(բ) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկը շուկայի օբյեկտիվ իրականությունն է, նրանից չի կարելի խուսափել. ուստի Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ունենալու հանգամանքը, որի նպատակն է կանխատեսել և հնարավորինս կանխել և/կամ նվազեցնել Ընկերության և հաճախորդների ռիսկերը՝

դրանց հետևանքները վերացնելու փոխարեն: Այս առումով Ընկերությունն իրականացնում է ռիսկերի կանխարգելմանն ուղղվող հետևյալ հիմնական միջոցառումները.

- (1) թողարկողների մանրամասն վերլուծություն (առաջին հերթին Ընկերությունն ուշադրություն է դարձնում հետևյալ գործոնների առկայությանը՝ եռանդուն և վճռական

կառավարիչների արհեստավարժ թիմ, ռազմավարության հստակ պատկերացում և մանրամասն գործարարության ծրագիր (քիզնես-պլան), շուկայում առաջատար դիրքեր գրավելու ներուժ, սպառողական պահանջարկի բավարարման լայն հնարավորություններ, ֆինանսական ցուցանիշներ, թափանցիկություն և կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանում և այլն)։

- (2) ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա.
 - (3) առկա և պոտենցիալ հաճախորդներին (անկախ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի ժամկետի ավարտից) իրազեկում բարձր հուսալիությամբ և եկամտաբերությամբ բնութագրվող ներդրումային նախագծերի վերաբերյալ:
- (գ) Բրոքերային գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի վերլուծությունը (բացահայտումը, գնահատումը և վերահսկումը) Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասն է հանդիսանում:

Կանոն 15. Հաճախորդների միջոցների պաշտպանությանն ուղղված հատուկ դրույթներ

- (ա) Ընկերության մոտ գտնվող հաճախորդի արժեթղթերն ու դրամական միջոցները, ինչպես նաև դրանց օգտագործման հետևանքով ստացված շահույթը չի կարող գրավ դրվել կամ բռնագանձվել Ընկերության պարտքերի դիմաց՝ առանց հաճախորդի համաձայնության:
- (բ) Ընկերության սնանկացման կամ անվճարունակության, ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի դադարեցման դեպքում հաճախորդի կողմից Ընկերությանը հանձնված արժեթղթերը, դրամական միջոցները և դրանց կառավարման հետևանքով առաջացած շահույթն առանձնացվում են նրա գույքից և վերադարձվում հաճախորդին՝ վերջինիս առաջին իսկ պահանջով:

Կանոն 16. Բրոքերային(դիվերային) ծառայությունների մատուցման կանոններն ու պահանջները

- (ա) Արգելվում է լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված բրոքերային(դիվերային) ծառայություններ մատուցել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդներին:
- (բ) Ընկերությունը լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված պորֆեսիոնալ հաճախորդներին կարող է տրամադրել առավելագույնը 1:50 լեվերիջ:
- (գ) Ընկերությունը լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված կարող է ծառայություններ մատուցել միայն այն դեպքում, եթե ծառայության շրջանակում հաճախորդի կողմից ներդրվող նվազագույն ապահովվածության գումարը (մարժան) առնվազն 5000000 Հայաստանի Հանրապետության դրամ է:
- (դ) Ընկերությունը լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայություններ մատուցելիս պետք է ապահովի, որպեսզի հաճախորդի կորուստը չլինի ավելին, քան իր կողմից ներդրված նվազագույն ապահովվածության գումարն (մարժան) է:
- (ե) Հաճախորդներից լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման կամ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների կատարման հետ կապված ծառայություններ մատուցելու դեպքում Ընկերության գործընկեր կարող են լինել այն կազմակերպությունները, որոնք բավարարում են ստորև սահմանված չափանիշներից առնվազն երկուսին.
 - 1) միջազգային լավագույն կարգավորման ստանդարտներին համապատասխանություն (գործընկերոջ կարգավորող մարմինը IOSCO-ի Հավելված Ա-ի անդամ է),
 - 2) առնվազն 10 տարվա գործունեության պատմության առկայություն,
 - 3) վարկանիշի առկայություն (առնվազն Բաա1/Պ-2; ԲԲԲ+/Ա-2; ԲԲԲ+/Ֆ2):
- (զ) Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների մատուցման պայմանագրի դեպքում լրացվում է նաև.
 - 1) լեվերիջի առավելագույն մեծությունը, դրա փոփոխության պայմանները,

- 2) ծառայության կամ գործարքի արդյունքում կորուստների դեպքում փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ տեղեկություններ,
- 3) մարժայի և այլ միջոցների փոխանցման կարգը,
- 4) գործարքին բնորոշ այլ առանձնահատուկ պայմանները:

Կանոն 17. Եզրափակիչ դրույթներ

- (ա) Սույն Կանոնները ուժի մեջ են մտնում «ԱԼՖԱՍԵ-ԶՅՈՒՐԻԹԻՉ» ՍՊԸ միակ մասնակցի կողմից հաստատման պահից:
- (բ) Ընկերությունն իրավունք ունի սույն Կանոնների մեջ փոփոխություններ մտցնել առանց Հանախորդի նախնական համաձայնության:
- (գ) Սույն Կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության միակ մասնակցի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո:
- (դ) Բրոքերային (դիլերային) գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերում կատարված փոփոխությունների հետևանքով սույն Կանոնների փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում համապատասխան նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ և լրացումներ առաջացնող նորմատիվ իրավական ակտերում սահմանված են այլ ժամկետներ:
- (ե) Սույն Կանոնների մասը կազմող սահմանված ձևերի փոփոխության դեպքում այդ փոփոխությունները ուժի մեջ մտնելու պահից 3 ամսվա ընթացքում նոր ձևերի հետ համատեղ ուժի մեջ են մնում նաև հին ձևերը:
- (զ) Սույն Կանոնների, ինչպես նաև բրոքերային (դիլերային) ծառայությունների սակագների, միջնորդավճարների և այլ ծախսերի փոփոխության մասին Ընկերությունը պարտավոր է ծանուցել Հանախորդին փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օր առաջ:
- (է) Փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ծանուցումը ուղարկվում է Հանախորդի նախընտրած եղանակով: Հանախորդի կողմից ծանուցման նախընտրելի ձևի բացակայության դեպքում լռելյալ կարգով հաղորդակցման միջոց է ընտրվում էլեկտրոնային փոստը: Ընդ որում, պայմանագրում կատարված փոփոխությունները հրապարակային լինելու դեպքում ծանուցման մեջ հղում է կատարվում համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին): Եթե պայմանները ոչ հրապարակային են, ապա տրամադրվում է վավերացման թղթային օրինակը կամ էլեկտրոնային տարբերակը՝ հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ:

Ձև 1

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ և ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ**

Արժեթղթերը և նրանց առանձնահատկությունները
 Գերազանց Լավ Միջին Անբավարար

Արժեթղթերի հետ կապված ռիսկեր
 Գերազանց Լավ Միջին Անբավարար

Գնահատեք Ձեր փորձը արժեթղթերի ոլորտում
 Հարուստ Բավարար Կարճատև Բացակայում է

Գնահատեք Ձեր փորձը ըստ արժեթղթերի տեսակների

	Հարուստ	Բավարար	Կարճատև	Բացակայում է
Բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Աձանցյալ գործիքներ	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Ներդրումային ֆոնդի արժեթղթեր	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Արժույթային պայմանագրեր	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Ռեպո գործարքներ	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Մուրհակներ	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Արժեթղթերով փոխառություններ և վարկավորում	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>
Այլ գործարքներ	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>	<input type="text"/>

Ձեր կրթական մակարդակը

Գիտական աստիճան Բարձրագույն Միջնակարգ

Ձեր մասնագիտությունը

Ձեր զբաղմունքը (աշխատավայր/պաշտոն)

Ամսաթիվ

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Ձև 2

ՊԱՏՎԵՐ N _____

Պատվերի ստացման ժամանակը (տարի/ամիս/օր/ժամ/րոպե) _____

Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) _____

Պատվեր գրանցող անձի անունը, ազգանունը _____

Գնային պայմանները _____

Ծավալային պայմանները

- Շուկայական պատվեր
- Գնման լիմիտային պատվեր
- Վաճառքի լիմիտային պատվեր
- Գնման ստոպ պատվեր
- Վաճառքի ստոպ պատվեր
- Գնման ստոպ լիմիտային պատվեր
- Վաճառքի ստոպ լիմիտային պատվեր

- Բավարարել լրիվ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

Ժամանակային պայմանները _____

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Անմիջապես բավարարել կամ հանել

N	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը)	Գործարքի տիպը (կարգավորվող շուկայում/ չկարգավորվող շուկայում)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ	Գործարքի ընդհանուր ծավալը	Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ

Սույնով հավաստիացնում եմ նաև, որ ծանոթ եմ Ընկերության պատվերների կատարման քաղաքականությանը և տալիս եմ իմ նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունը իմ նկատմամբ կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև հավաստիացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով ներկայացրել է արժեթղթերում ներդրումների հետ կապված ռիսկերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն և համաձայն եմ կրել սույն պատվերի հետ կապված բոլոր ռիսկերը:

Հաճախորդ _____
(ստորագրություն)

Պատվեր գրանցող _____
(ստորագրություն)

Ձև 3

Գործարքի վավերագիր N_____

Վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)_____

Պատվեր N_____

Հանախորդի անունը, ազգանունը (անվանումը) _____

N	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեթղթի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրանկարագիրը)	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր)	Գործարքի կնքման ժամը (ժամ/րոպե)	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք, վաճառք) կամ բնույթը, եթե առք կամ վաճառք չէ	Գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը և ընդհանուր գումարը		Մեկ արժեթղթի գինը	Գործարքի մյուս կողմը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները
						քանակը	ընդհանուր գումարը			

Բրոքեր (դիլեր)՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

Ձև 4

Ալֆասերյուրիթիզ ՍՊԸ
գործադիր տնօրեն
տ-ն Գ. Գրիգորյանին

Դիմում

Խնդրում եմ չեղյալ համարել իմ կողմից --/ --/ --/ ներկայացված թիվ —
արժեթղթերի գնման/վաճառքի պատվերը:

Դիմող՝ _____ (ստորագրություն)

(անուն, ազգանուն/ անվանումը)

--/ --/ --/ թ.

Ձև 5

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույնով ես _____, հանդիսանալով Ալֆասերբյուրիթիզ ՄՊԸ Հանախորդ, համաձայն եմ որակավորվել որպես պրոֆեսիոնալ հանախորդ՝ տեղեկացված լինելով, որ տվյալ դեպքում հանախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իմ նկատմամբ և այդ պատճառով կորցնում եմ որոշակի պաշտպանություն:

Հանախորդ՝ _____ (անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի անվանում)
(ստորագրություն)

Ձև 6

Հաշվետվություն N _____

Հանախորդի անունը, ազգանունը (անվանումը) _____

N	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեթղթի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրանկարագիրը)	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր)	Գործարքի կնքման ժամը (ժամ/րոպե)	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տեսակը (առք, վաճառք) կամ բնույթը, եթե առք կամ վաճառք չէ	Գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը և ընդհանուր գումարը		Մեկ արժեթղթի գինը	ՊՆՀ ՍՄՀ ՍՄՀ ԻՎՕՍԱ	ՊՆՀ ՍՄՀ ԻՎՕՍԱ («ՆԿՅՆԻՑ» «ՍՄՀՅՆԻՑ»)
						քանակը	ընդհանուր գումարը			

Բրոքեր (դիլեր)՝ _____ (անուն, ազգանուն)
(ստորագրություն)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների ռիսկայնության
տեղեկացվածության վերաբերյալ**

Ես՝ _____ ,

անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անունը, ազգանունը, հայրանունը)

տեղյակ եմ, որ լեվերիջով գործարքները, այդ թվում՝ ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այս գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն հանախորդներին, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան): Գիտակցում եմ նաև, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում կարող եմ ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել:

(ստորագրություն)

_____ 20 թ.